

Համարի հարցումը. համաձայն էք, որ «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ երբեմնի սեփականություն՝ դպրոցականների ճամբարն ու պրոֆիլակտորիան, որ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ (կոմբինատի մասնավորեցման մասին) պետք է տրվեր Քաջարան քաղաքային համայնքին, ծառայի ոչ թե դպրոցականներին ու լեռնագործներին, այլ լինի կոմբինատի մի քանի օտարական ղեկավարի խրախճարան:

ՀԻՍՏՈՂԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐՎԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՏ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան
Շահումյան 20/32, 3901:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:



Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՉՈՐԵՃՆԱԲԹԻ, 26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ.
№ 4 (520)

Եվ ինչպես կարո՞ղ է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները...

ՀՈԿՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ



Հանքարդյունաբերությունը Հայաստանում երեք անգամ ավելի արագ է աճում, քան մշակող արդյունաբերությունը

Ճայաստանի տնտեսական բյուրի պատասխանատուներն ամփոփում են նախորդ տարին: Եվ ինչպես հատուկ է մեր պաշտոնյաներին, ասույթների ու ելույթների ժամանակ խոսվում է միայն դրական զարգացումների մասին: Շեշտվում են տարեկան շուրջ 7 % տնտեսական աճը, արդյունաբերության եւ արտահանման գրեթե երկնիշ աճերը եւ այլն: Սակայն, տնտեսության մասին հստակ պատկերացում կազմելու համար հարկավոր է հասկանալ, թե ինչպես եւ ինչի հաշվին են գոյանում այդ աճերը: Տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրական միտումներին զուգահեռ կան նաեւ բազմաթիվ բացասական միտումներ ու մեխիզմներ: Բացասական այդ միտումներից մեկն այն է, որ Հայաստանում հանքարդյունաբերությունը մոտ երեք անգամ ավելի արագ է աճում, քան մշակող արդյունաբերությունը:

2019 թ. առաջին 11 ամիսներին՝ հունվար-նոյեմբերին, Հայաստանի ամբողջ արդյունաբերական արտադրանքը կազմել է 1 տրլն 856 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 9.3 %-ով աճել է:

Հանքարդյունաբերության աճը 23.9 % է

Հանքարդյունաբերական արտադրանքի ծավալն 2019 թ. հունվար-նոյեմբերին, ըստ Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ), կազմել է մոտ 323.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 23.9 %-ով:

Հանքարդյունաբերության ոլորտի ծավալը հիմնականում ապահովում է մետաղական հանքաքարի արդյունահանումը: Մեկուկես տարվա դադարից հետո՝ 2019թ. հուլիսի 1-ից, Թեղուտի հանքավայրը կրկին վերագործարկվել է: Վերականգնվում է պղնձի ու մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Եվ հենց Թեղուտի գործունակ է պայմանավորված հանքարդյունաբերության նախորդ տարվա աճը: Ընդ որում՝ նկատելի է, որ ոլորտի աճը նոր թափ է հավաքել երրորդ եռամսյակից սկսած: Առաջին եռամսյակում հանքարդյունաբերության ոլորտում է գրանցվել 4.5 %-ով, բայց երկրորդ եռամսյակից այն սկսել է աճել, ու կիսամյակի կտրվածքով աճը կազմել է 6.8 %: Երրորդ եռամսյակում, ինչպես երեւում է, մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալներն էականորեն ավելացել են, ինչի արդյունքում ինը ամիսների կտրվածքով հանքարդյունաբերությունը, նախորդ տարվա նույն ամիսների համեմատ, արդեն 19.5 %-ով է աճել:

Վիճկոմիտեի այլ տվյալներից հստակ երեւում է պղնձի ու մոլիբդենի արդյունահանման ծավալների աճը: Մասնավորապես, պղնձի ծավալները հունվար-նոյեմբերին

Հայաստանն Իրանի հետ դադարեցրել է ցամաքային հաղորդակցությունը, օդայինը՝ սահմանափակել, իսկ Կապանի ԲԿ-ում կորոնավիրուսով հիվանդի մեկուսացման վերաբերյալ լուրը հերքվել է

Ի կորոնավիրուսի կանխարգելման հանձնաժողովի նիստի արդյունքներով (24.02.2020 թ.) որոշվել է՝

1. երկու շաբաթով դադարեցնել ցամաքային հաղորդակցությունն Իրանի Իսլամական Հանրապետության հետ,
2. օդային հաղորդակցության նկատմամբ կիրառել ոչ ամբողջական սահմանափակումներ,
3. Իրանի Իսլամական Հանրապետության հետ բեռնափոխադրումներն իրականացնել առանց սահմանափակումների՝ կիրառելով վարորդների նկատմամբ հատուկ հսկողության ռեժիմ,
4. որել է սահմանափակում չկիրառել Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության քաղա-

քացիների՝ հայրենիք վերադառնալու համար,

5. երկու շաբաթվա ընթացքում բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության հետ լինել սերտ հաղորդակցության մեջ, ամբողջացնել տեղեկություններն ԻԻՀ-ում կորոնավիրուսի տարածման ծավալների վերաբերյալ՝ հետագա անելիքները ձգարտելու համար: Նիստի ավարտի եւ դրա արդյունքներով ընդունված որոշումների մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես նշել է՝ «Հարկ եմ համարում արձանագրել, որ Հայաստանում կորոնավիրուսով վարակվածության ոչ մի դեպք չունենք եւ հոյս ունեմ՝ չենք ունենա: Հայաստանն ունի բոլոր անհրաժեշտ տեխնիկական եւ մաս-

նագիտական ռեսուրսները՝ կորոնավիրուսի ճշգրիտ ախտորոշման համար»:

Մինչ այդ՝ փետրվարի 23-ին, համացանցում տեղեկություն տարածվեց այն մասին, թե իբր Կապանի բժշկական կենտրոնում կորոնավիրուսով հիվանդներ են մեկուսացվել:

Նույն օրը «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն արձագանքել է այդ հրապարակմանը՝ «Պաշտոնապես հայտնում ենք, որ առ այսօր, ոչ մի նման կասկածելի հիվանդ մեզ չի դիմել, չի հոսպիտալացվել եւ առավել եւս չի մեկուսացվել»:

Խնդրում ենք խուճապի չմատնվել եւ հետեւել միայն պաշտոնական լրահոսի»:

Ավելի վաղ հայտարարություն էր տարածել

Ռեկուլտիվացման աշխատանքների արժեքը կկազմի 3 մլրդ 277 մլն դրամ

Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական տեղամասի ռեկուլտիվացման աշխատանքների արժեքը, ըստ նախնական տվյալների՝ կկազմի 3 մլրդ 277 մլն 800 հազար դրամ: Այս մասին «Հայկական ժամանակ»-ի գրավոր հարցմանն ի պատասխան նշեցին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախորդ ամիս՝ Կապանում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ ասաց, որ ՀՀ կառավարությունը նախատեսում է շուտով սկսել Սյունիքի մարզում գտնվող Կավարտի մետաղական հանքի ռեկուլտիվացման աշխատանքը:

«Մեր վերջին աշխատանքային հանդիպման ժամանակ Շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանը հավաստիացրել է, որ շատ շուտով մենք կսկսենք Կավարտի հանքի ռեկուլտիվացման աշխատանքները: Այսինքն՝ հանքը կփակվի, եւ այդ տարածքը լիարժեք կվերադառնա բնությանը», - ասել էր Փաշինյանը:

Նշենք, որ ռեկուլտիվացման աշխատանքների ամբողջություն է, որն իրականացվում է խախտված տարածքների վերականգնման եւ հողային տարածքների՝ անվնաս վիճակի բերման նպատակով:

Մինչեւ 1950-ական թթ. Կավարտի հանքը շահագործվել է որպես փակ հանք, իսկ մինչեւ 1985 թ.՝ որպես բաց հանք: Հայաստանի անկախացումից հետո շահագործումը վերսկսվել է 1999 թվականին: Հետագայում՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի մասնավորեցումից հետո, նոր սեփականատերը շարունակել է Կավարտի բացահանքի շահագործումը, սակայն 2-3 տարի անց նորից դադարեցրել այն:

Բնապահպանները մի քանի տարի շարունակ անդադարձել էին խնդրին՝ նշելով, որ Կավարտի լքված հանքավայրը Կապան քաղաքի եւ մոտակա այլ բնակավայրերի գլխին կախված էկոլոգիական վտանգներից է, որի ծանր մետաղներով հարուստ հոսքաջրերը տարբեր եղանակներով խառնվում են մակերեսային եւ գրունտային (բնահող) ջրերին՝ դառնալով դանդաղ գործողության ռուսի շրջակա միջավայրի եւ մարդկանց համար:

Դեռեւս 2015-ին Հայկական բնապահպանական ճակատը հարցեր էր բարձրացրել, թե ու՞մն է այդ լքված հանքավայրը, ո՞վ պետք է ռեկուլտիվացում անի այն, եւ որտե՞ղ են այն պետական լիազոր մարմինները, որոնք պատասխանատու են հանքարդյունահանման ոլորտի համար: Սակայն այդ հարցերը պատասխան չստացան, եւ ոչ էլ խնդիրը լուծվեց: Նախկինում Կավարտի հանքից հրաժարման փաստաթուղթը ստորագրելիս պետությունը պարտավորությունները չի ներառել դրա մեջ:

Նշված թեմայի վերաբերյալ գրավոր հարցում էինք ուղարկել Շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանին: Ներկայացնում ենք հարցուպատասխանը:

- Պարոն նախարար, այս պահին ո՞վ է հանդիսանում Կավարտի հանքի սեփականատերը: Քանի՞ տարի այն չի գործում:

- Կապանի պղնձի հանքավայրն այս պահին հանդիսանում է պետական սեփականություն: Հանքավայրը չի շահագործվում 11 տարի:

- Որքան ժամանակ է անհրաժեշտ ռեկուլտիվացման աշխատանքի համար: Ինչպե՞ս է կատարվում ռեկուլտիվացման աշխատանքը, եւ արդյո՞ք դրա արդյունքում բնությունն ամբողջությամբ կվերականգնվի:

- Ռեկուլտիվացման աշխատանք-



Կամբողջանա Կապանի Գարեգին Նժդեհի հրապարակը

Ի աղուց մեր աչքը հետ է վարժվել շինարարական եռուզեռից, որ կար հին, բարի ժամանակներում: Վերամբարձ կռունկները վաղուց հուշ են դարձել, լավագույն դեպքում ավտոկռունկի կարելի է հանդիպել:

Մարզկենտրոնում երկու շինհրապարակ կա, մեկը թիվ 7 դպրոցի շինարարության է առնչվում, մյուս

շինհրապարակը Կապանի մշակույթի կենտրոնն է, որտեղ հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում: Կողքից նայողին թվում է, թե շենքի ծակատային մասն է միայն փոփոխվում, բայց պատկերացումը փոխվում է, երբ շրջում ես եռահարկ կառույցի հարկերով:

Նախ նշենք, որ մի անգամ սկսվել էր հիմնանորոգման աշխատանքները եւ անորոշ ժամանակով դադարեցվել:

Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց «Նորոգչին» ՄՊԸ ընկերության աշխույժ Ջեմս Վարդանյանը, անցյալ տարվա հուլիսին սկսվել են հիմնանորոգման աշխատանքները, որ ընդգրկում է կառույցի մեկ երրորդ մասը: Արդեն հեռացրել են կախովի առատաղը, բետոնի ավելորդ կառուցվածքները, ավարտին են մոտենում շենքի ծակատային հատվածի երեսապատման աշխատանքները: Նաեւ հընթացս սրբագրման աշխատանքներ են կատարվում, քանզի նախկինում թերություններ են եղել:

Վերակառուցման աշխատանքներ են կատարվում մասնաշենքի երեք հարկում: Դա եւ ներքին հարդարման աշխատանքները նախատեսվում են ավարտել մինչեւ տարեվերջ:

Մնում է ավելացնել, որ մշակույթի կենտրոնի վերակառուցումով կամբողջանա մարզկենտրոնի Գարեգին Նժդեհի հրապարակը:

Վահրամ Օրբելյան



Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանն այցելել է Գորիսի պետական քոլեջ

Օ տերվարի 18-ին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանն այցելեց Գորիսի պետական քոլեջ:

Տնօրեն Կարեն Լազարյանի ուղեկցությամբ նա շրջեց կրթօջախում՝ ծանոթանալով շենքային պայմաններին, ներկայումս ընթացող նորոգման աշխատանքներին,

հագեցվածությանը, առաջարկվող կրթական ծրագրերին ու տարբեր մասնագիտացումներ ապահովող հնարավորություններին, ինչպես նաեւ գրանցած հաջողություններին ու առաջիկա անելիքներին:

Գորիսի պետական քոլեջում ընթացիկ ուսումնական տարում 149 ուսանող է սովորում: Կրթօջախն ունի 63 աշխատող (դասախոսական կազմը՝ 43 հոգի): Միջին մասնագիտական կրթական ծրագրով 6 մասնագիտություն ունի (նաեւ՝ հեռակա), որից 5-ն է գործում, մեկում ընդունելություն չի եղել, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով՝ 11 մասնագիտություն, որից 4-ն է գործում:

Մարզպետը հանդիպում ունեցավ ու գրուցեց նաեւ քոլեջի դասախոսների եւ ուսանողների հետ, լսեց նրանց բարձրացրած խնդիրներն ու պատասխանեց հարցերին:

Տարեգրության սրահում Հունան Պողոսյանը ծանոթացավ կրթօջախի 100-ամյա արգասաբեր ուղուն:

Տարածաշրջանի հնագույն այդ կրթօջախը տասնամյակներ շարունակ կադրերի պատրաստման դարբնոց է եղել ոչ միայն Սյունիքի, Վայոց ձորի, այլեւ Արցախի դպրոցների, տնտեսական, հոգեւոր-մշակութային եւ պետական կառավարման ոլորտների համար:

Այդ կրթօջախում են կրթություն ստացել արձակագիրներ Սերո հանգադյանը, Սուրեն Այվազյանը, բազմաթիվ մեծանուն գիտնականներ ու ազգային գործիչներ:

Կրթօջախի հետ է կապված նաեւ Ամենայն հայոց գոսան Աշոտի կենսագրությունը:

Այցի արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն, որի համաձայն կրթօջախի հիմնախնդիրներին եւ դրանց լուծման ուղիների վերաբերյալ մարզպետարան կներկայացվի տեղեկանք, որն էլ կդառնա քննարկման առարկա պատկան մարմինների հետ:

Այցի ընթացքում մարզպետին ուղեկցում էին նաեւ Գորիսի համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանը եւ մարզպետի օգնական Արտյոմ Իվանյանը:

Վահրամ Օրբելյան



Գեներալ-մայոր Զալալ Հարությունյանը նշանակվել է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար-պաշտպանության բանակի հրամանատար

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ գեներալ-լեյտենանտ Կարեն Աբրահամյանն ազատվել է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար-պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնից:

Նախագահ Բակո Սահակյանի ստորագրած մեկ այլ հրամանագրով՝ գեներալ-մայոր Զալալ Հարությունյանը նշանակվել է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար - պաշտպանության բանակի հրամանատար՝ ազատվելով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետի պաշտոնից:

president.nkr.am



Զալալ Անատոլիի Հարությունյան

Ծնվել է 1974թ. նոյեմբերի 11-ին, Ասկերանի շրջանի Բաղարա գյուղում:

1981-1991 թթ. սովորել է Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի միջնակարգ դպրոցում: 1991թ. ընդունվել է Արցախի պետական մանկավարժական ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետը: 1995թ. ավարտել է Արցախի պետական համալսարանը: 1999թ. ընդունվել է ՌԴ պաշտպանության նախարարության ռազմաօդային ակադեմիան, որն ավարտել է կարմիր դիպլոմով:

1992 թ. նոյեմբերի 5-ից ծառայում է ՊԲ-ում:
1992-2016 թթ. ՊԲ տարբեր զորա-

մասերում զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ՝ հրետանային հետախուզության պետի օգնական, հրետանային հետախուզության պետ, զորամասի ուսումնական շՌ հրամանատար, գնդի հրամանատարի տեղակալ, գնդի հրամանատար, միավորման հրետանու պետ, պաշտպանական շրջանի հրամանատար, միավորման հրամանատարի տեղակալ-շտաբի պետ, միավորման հրամանատար:

2018 թ. դեկտեմբերի 14-ին ԱՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետ:

2019թ. հուլիսի 8-ին ԱՀ նախագահի հրամանագրով շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

1992-1994 թթ. մասնակցել է մարտական գործողությունների:

Պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի, «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ Օզանյան», «Մարշալ Բաղրամյան», «Դրաստամատ Կանայան», «Մարտական հերթապահության համար» 1-ին աստիճանի, «Նելսոն Ստեփանյան», «Անբասիր ծառայություն» 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ աստիճանի եւ այլ պետական ու զերատեսչական մեդալներով:

Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մեկ որդի:

Հայաստանն Իրանի հեղափոխությունը և ցամաքային հաղորդակցությունը, օդայինը՝ սահմանափակել, իսկ Կապանի ԲԿ-ում կորոնավիրուսով հիվանդի մեկուսացման վերաբերյալ լուրը հերքվել է

ՀՀ ԱԳՆ-ն: Հայտարարության մեջ նշվել է. «Մեր տարածաշրջանում իրադրության համալիր գնահատման առումով սերտորեն համագործակցում ենք Իրանի եւ Վրաստանի մեր գործընկերների հետ՝ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաեւ անհրաժեշտ քայլերի եւ հնարավոր սցենարների դիտարկման ուղղությամբ: Ձեռնարկվող քայլերի մասին կտեղեկացնենք հավելյալ»:

Հորդորում ենք ՀՀ քաղաքացիներին՝ առանց հրատապ անհրաժեշտության զերծ մնալ Իրան այցելելուց, իսկ ներկայումս Իրանում գտնվող մեր քաղաքացիներին՝ կապ հաստատել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության հետ»:

Իրանի Իսլամական Հանրապետությունում կորոնավիրուսով ախտահարման եւ մահվան դեպքերի վերաբերյալ առաջին տեղեկությունները ստանալուց հետո հանրապետությունում ձեռնարկված առաջին քայլերից մեկն էլ կապված է եղել Մեղրու անցակետի հետագա գործունեության հետ: Եվ որպես առաջին քայլ,



Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի կողմից աշխատանքային խումբ է գործուղվել Մեղրիի բժշկասանիտարական հսկիչ կետ՝ հսկելու սահման-

ին ուժեղացված ռեժիմով իրականացվող վերահսկողական աշխատանքների ընթացքը:

Հանքարդյունաբերությունը Հայաստանում երեք անգամ ավելի արագ է աճում, քան մշակող արդյունաբերությունը

Կազմել են 361.7 հազար տոննա, որը 24 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշը: Իսկ մոլիբդենի խտանյութի ծավալները կազմել են 13 հազար տոննա՝ աճելով 27.8 %-ով:

Այսպիսով՝ հանքարդյունաբերության աճը նախորդ տարի զգալի է դարձել: Թեեւ տարեկան տվյալները դեռեւս չեն ամփոփվել, սակայն հաշվի առնելով նախորդ տարվա առաջին 11 ամիսների տվյալները՝ կարելի է ենթադրել, որ տարեկան աճը 25 %-ին մոտ կլինի: Այս աճն էլ իր հերթին էականորեն ազդելու է ընդհանուր արդյունաբերության աճի վրա:

Մշակող արդյունաբերությունն աճել է 8.2 %-ով

Ի տարբերություն հանքարդյունաբերության՝ մշակող արդյունաբերությունն ավելի դանդաղ է աճում: Ըստ Վիճկոմիտի տվյալների՝ 2019-ի հունվար-նոյեմբերին մշակող արդյունաբերության ծավալները կազմել են 1 տրլն 281 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 8.2 %-ով:

Իհարկե, գրանցված աճը փոքր չէ, սակայն ինչպես նախկինում եւս գրել ենք, հանքարդյունաբերության առաջանցիկ աճը բոլորովին չի համապատասխանում իշխանության հայտարարած տնտեսական հեղափոխության գաղափարներին: Նախատեսված է արդյունաբերության ոլորտում հանքարդյունաբերության կշիռն նվազմանը զուգահեռ ավելացնել մշակող արդյունաբերության կշիռը: Նախորդ տարի մշակող արդյունաբերության կշիռն իսկապես նվազել է: Սակայն, դա տեղի է ունեցել ոչ թե հանքարդյունաբերության կշիռն նվազմանը զուգահեռ, այլ՝ էլեկտրաէներգիայի եւ ջրամատակարարման ծավալների նվազման ու դրանց կշիռն փոքրացման հետեւանքով, որին հողվածի վերջին հատվածում կանդաղառնանք:

Մշակող արդյունաբերության աճը մեծ մասամբ պայմանավորված է այս ոլորտում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ծավալների ավելացմամբ՝ սննդի, խմիչքի ու ծխախոտի:

Մասնավորապես, սննդի արտադրության ծավալները 11 ամիսներին կազմել են 456.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճելով 4.7 %-ով:

Խմիչքի արտադրությունը կազմել է 166.7 մլրդ դրամ՝ աճելով 11.4 %-ով:

Եվ մյուս խոշոր ապրանքախումբը ծխախոտն է, որի արտադրության ծավալները կազմել են 175.5 մլրդ դրամ՝ աճելով 9.7 %-ով:

Որոշակի տեսանելի ակտիվության կա հազարավոր արտադրության ոլորտում: Հազարավոր արտադրության ծավալները կազմել են 24 մլրդ դրամ՝ աճելով 19.6 %-ով:

Տարին անկումային էր հիմնադրված մետաղների արտադրության համար: Արտադրության ծավալները 2019-ի առաջին 11 ամիսներին կազմել են 154.5 մլրդ դրամ՝ նվազելով 4.4 %-ով: Սա մտահոգիչ է հատկապես այն առումով, որ հիմնային մետաղների արտադրությունը Հայաստանում էական կշիռ (12.1%) ունի մշակող արդյունաբերության ոլորտում:

Արդյունաբերության ոլորտի մյուս խոշոր խմբում՝ էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարման ոլորտներում եւս որոշակի անկում կա: Այստեղ պետք է հիմնականում հասկանալ էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումը եւ բաշխումը: էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարման ընդհանուր ծավալը կազմել է 228.2 մլրդ դրամ՝ նվազելով 0.9 %-ով: Եվ, մասնավորապես, էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումն եւ բաշխումը կազմել են 193.9 մլրդ դրամ՝ նվազելով 3.3 %-ով:

Մյուս ենթաօլորտը ջրամատակարարումն է, կոյուղին, թափոնների կառավարումն ու վերամշակումը: Ծավալները կազմել են 23.2 մլրդ դրամ՝ նվազելով 2.1 %-ով:

Մշակող արդյունաբերության կշիռն աճել է ի հաշիվ ջրամատակարարման ու էլեկտրաէներգիայի ծավալների կրճատման

Մշակող արդյունաբերության կշիռը Հայաստանի ամբողջ արդյունաբերության կազմում 2019 թվականի հունվար-նոյեմբերի տվյալներով 69 % է: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (66 %) մշակող արդյունաբերության կշիռն աճել է 3 տոկոսային կետով:

Ինչպես ցույց են տալիս Վիճկոմիտի տվյալները, դա տեղի է ունեցել ջրամատակարարման ու էլեկտրաէներգիայի ծավալների կրճատման հաշիվին, քանի որ ծավալների կրճատմանը զուգահեռ նվազել է նաեւ այլ ոլորտների տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության մեջ:

hetq.am

Ռեկուլտիվացման աշխատանքների արժեքը կկազմի 3 մլրդ 277 մլն դրամ

Էջ 2

ները կրելու են համապարփակ բնույթ՝ ներառելով նախագծման փուլ, հողային աշխատանքներ, վերականգնվող լանդշաֆտի ձեռավորում եւ ջրահեռացման համակարգերի ստեղծում, խախտված տարածքներում աղտոտվածության չեզոքացում, կենսաբանական ռեկուլտիվացում, ծառերի կաշտկանության հսկում եւ վերատնկում՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաեւ հետնախագծային մոնիթորինգ: Ամբողջական գործընթացը, ըստ միջազգային պրակտիկայում կիրառվող նորմերի, կարող է տեւել մի քանի տարի:

– Կան հանքեր, որտեղ եւս նախատեսված են այդպիսի աշխատանքներ, եթե այո, ապա որո՞նք են դրանք:

– 2018-2019 թթ. կատարվել են հանրապետության տարածքում ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների, լքված արտադրական լցակայանների եւ խախտված տարածքների գույքագրում, առանձնացվել է 10 տեղամաս, որտեղ ռեկուլտիվացման աշխատանքների իրականացումն առավել հրատապ է: Դրանք են՝ Նազիկի, Դաստակերտի, Ողջիի, Փխրուտի եւ Սոթքի փակված պղնձաբարները, Տանձուտի, Ալավերդու (Մաղանի), Ախթալայի, Յանքավանի եւ Կապանի արտադրական լցակայանների տեղամասերը:

– Որքան գումար է պետությունը ծախսելու այս աշխատանքների համար:

– Նախնական գնահատականներով, Կապանի պղնձի հանքավայրի կենտրոնական տեղամասի ռեկուլտիվացման աշխատանքների արժեքը կկազմի 3 մլրդ 277 մլն 800 հազար դրամ: Շրջակա միջավայրի նախարարությունը 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի շրջանակներում տարածքի վերականգնման նախագծային փաստաթղթերի կազմման նպատակով հայցում է 820 միլիոն դրամ ֆինանսավորում:

– Հանքի չչահագործվելուց հետո արդյո՞ք սեփականատերը պարտավորություն չունի ռեկուլտիվացման աշխատանք անելու, եթե այո, ապա ինչո՞ւ չի արել:

– Համաձայն գործող օրենսդրական կարգավորումների՝ օգտակար հանածոների արդյունահանում իրականացնող անձը պարտավոր է վերականգնել եւ բարելավել ընդերքօգտագործման հետեւնաքված խախտված հողամասերը: Սակայն «Դինո Գոլդ Մայնինգ Զամֆին» ՓԲ ընկերությունը, որն իրականացնում էր Կապանի հանքավայրի կենտրոնական տեղամասի շահագործումը, հանքի կոնսերվացման աշխատանքային նախագծով ռեկուլտիվացման աշխատանքների կատարում չի նախատեսել:

2018 թվականին Շրջակա միջավայրի նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, ինչով նախատեսվել են ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման ժամանակ բնապահպանական պարտավորությունների (այդ թվում՝ ռեկուլտիվացման աշխատանքների) կատարման ապահովող մեխանիզմներ:



Սիսիանի կենտրոնական հրապարակում կտեղադրվի մեծ LED էկրան

2 վստիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ եւ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «ժողովրդական զարգացում, ապակենտրոնացում եւ լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում Սիսիանի համայնքը դրամաշնորհ կստանա Սիսիանի կենտրոնական հրապարակում մեծ LED էկրան տեղադրելու համար: Էկրանի միջոցով հնարավոր կլինի ինչպես համայնքի բնակիչներին, այնպես էլ համայնք այցելած զբոսաշրջիկներին ծանոթացնել իրականացված ծրագրերին, ուղիղ միացմամբ հեռարձակել ավագանու նիստերը, անցորդներին տեղեկացնել սպասվող միջոցառումների, հանրային քննարկումների մասին եւ ՏԻՄ գործունեությունը դարձնել առավել թափանցիկ: Ծրագրի արդյունքում հնարավոր կլինի նաեւ ամռան ամիսներին երիտասարդների եւ համայնք այցելած զբոսաշրջիկների համար բացօթյա միջավայրում ապահովել համերգային ուրախ երեկոներ, կազմակերպել ֆիլմերի կամ ֆուտբոլային խաղերի դիտումներ:



Քննարկվեցին հաշվեքննության արդյունքները

Օ ետրվարի 18-ին Գորիսում կայացած հանդիպման ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատը ներկայացրեց Սյունիքի մարզպետարանում եւ նրա ենթակայության որոշ հիմնարկներում իրականացված հաշվեքննության արդյունքները. այն իրականացվել է 2017թ. հունվարի 1 - 2018թ. դեկտեմբերի 31 ժամանակահատվածի համար:

Մասնակցում էին Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը, պալատի 4-րդ վարչության աշխատակիցները, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, մարզի համայնքների ղեկավարները, մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ների եւ որոշ ՊՈԱԿ-ների ղեկավարներ:

Հանդիպման նպատակն էր ներկաների հետ քննարկել իրականացված հաշվեքննության արդյունքները, լսել նրանց նկատառումներն ու առարկությունները:

Գորիսի քաղաքային պարկերասրահում կայացավ Հրանտ Բաղդադյուլյանին նվիրված հուշ-ցերեկույթ

Օ ետրվարի 20-ին Գորիսի քաղաքային պատկերասրահում կայացավ ՀՀ նկարիչների միության անդամ, խեցեգործ, արվեստի եւ մշակույթի նվիրյալ, մեր հայրենակից Հրանտ Բաղդադյուլյանին նվիրված հուշ-ցերեկույթ: Միջոցառմանը ներկա էին նրա հարազատները, ընկերները, ինչպես նաեւ Գորիսի արվեստասեր հասարակությունը:

Իրենց ելույթներով հանդես եկան քաղաքային պատկերասրահի տնօրեն Ժիրայր Մարտիրոսյանը, բանաստեղծ Լեոն Սահակյանը, քանդակագործ Միքայել Ղուկասյանը, գրականագետ Սուրեն Վարդանյանը եւ Հրանտի հարազատները: Իսկ Ա. Սթաթանի անվան երաժշտական դպրոցի սաներն իրենց գեղեցիկ կատարումներով հիացրին ներկաներին:

Ելույթ ունեցավ նաեւ համայնքապետարանի կրթության եւ մշակույթի բաժնի պետ Արմինե Հովակիմյանը, ով շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին ու մասնակիցներին:



Ճանաչված սրտաբան Կարեն Յամբարձումյանը կրկին ԳործուՄ էր

Ի արեն Յամբարձումյան բժշկի անունը հարգանք ու պատկառանք առաջ բերող անուններից է Սյունիքում եւ հատկապես ԳործուՄ-ում:

Ու նրա ամեն մի այց, առանց չափազանցության, իրադարձության է վերածվում սրտային խնդիրներ ունեցող քաղաքացիների ու նրանց մերձավորների համար:

Դրանում վերստին համոզվեցինք 2020 թվականի փետրվարի 1-ին...

Վաթսուհից ավելի հիվանդ էր եկել ԳործուՄ բժշկական կենտրոն:

Եկել էին օգտվելու Կարեն Յամբարձումյանի գլխավորած Երեւանի ժամանած բժշկական խմբի ծառայություններից:

Հաճախորդներից շատերը, նկատելով մեզ, կամեցան «Սյունյաց երկրի» միջոցով խոսք ասել Կարեն Յամբարձումյանի եւ առհասարակ բժիշկների այդ խմբի հերթական երեսուցորդության մասին:

Բայց բավարարվեցինք երկու հոգու լսելով՝ համոզված լինելով, որ նրանք գրեթե բոլորի մտածումներն են արտահայտում:

Յեղիշու Յամբարձումյան, ԳործուՄ քաղաքի բնակիչ. «Մայրս երկու անգամ ինֆարկտ է տարել, շաքար ունի, ժամանակին բուժում է ստացել ԳործուՄի հայ-ֆրանսիական սիրտ-անոթային բժշկական կենտրոնում: Դա այն ժամանակ էր, երբ հիվանդանոցի բուժական մասի ղեկավարը Կարեն Յամբարձումյանն էր:

Այդ ժամանակվանից կապ ունեցն նրա հետ, քանզի մորս հանել է ծանր, համարյա անհուսալի վիճակից:

Լավ բժիշկ է մարդ է, մեք նրան ոչ միայն հավանում ենք, այլևս հավատում: Այսօր եկել ենք խորհրդակցելու եւ հետագա մեր անելիքները ձեռնդրել:

Իսկ նախաձեռնությունը, որ բժիշկները գալիս են Երեւանից, քաղաքի արժանի է, քանզի շատերն ի վիճակի չեն այցելելու մայրաքաղաքային հիվանդանոցներ»:

Անուշ Գրիգորյան, ԳործուՄ քաղաքի բնակիչ, Որոտան գյուղի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն ուսումնական մասի գծով. «Կարեն Յամբարձումյան բժշկի այցն անհրաժեշտ է եւ սպասված, այստեղ նա բազմաթիվ հիվանդներ ունի:

Շատ կարեւոր է, որ նրա մեջ լավ մարդը մեկտեղվում է հմուտ մասնագետի հետ: Ամեն բժիշկ չէ, որ կարող է այս եղանակին հասնել ԳործուՄ ու հետաքրքրվել հիվանդների վիճակով:

Ամուսնու առողջական խնդիրներով ենք նրա հետ ծանոթացել, մեկ տարի առաջ է ստենտավորել, գրի ենք: Դեղատեղիները կարող էր այցելել հիվանդներից Երեւան, բայց ինքը եկավ...»

Մայրաքաղաքից հեռու բնակավայրերի բնակիչների հանդեպ նման հոգատարությունն ընդօրինակման արժանի է»:

◆◆◆

Անշուշտ, ոչ ոյրորին նախաձեռնությամբ է Կարեն Յամբարձումյանը հանդես եկել. մեկ օրում վաթսուհի հիվանդ, այն էլ՝ եղանակային ոչ բա-

րենապատ այս օրերին:

Բժշկական թիմի մեջ էին տարբեր մասնագետներ՝ առիթմաբան, սրտային վիրաբույժ եւ այլն:

Հաճախորդների մի մասը եկել էր Մեղրիից, Քաջարանից, Կապանից, Սիսիանից:

Եվ, այդուհանդերձ, հաջողեցինք Կարեն Յամբարձումյանին զրոյցի հրավիրել:

Դեռեւ 2019 թ. հոկտեմբերի 5-ի մեր զրոյցում նա հավաստագրել էր, որ Երեւանի «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական սիրտ-անոթային բժշկական կենտրոնը, իր գլխավոր առաքելությունից զատ, նպատակ ունի նպաստ բերել մարզերում բժշկության զարգացմանը:

Այդ ռազմավարությունը շարունակում է կյանքի կոչվել, եւ անցած ամիսներին հասցրել են լինել Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզերում, Արմավիրում:

Ինչպես ԳործուՄ, այնպես էլ մյուս համայնքներ եւ մարզեր կատարած այցելությունների ժամանակ, կատարում են սրտային վիրաբույժի, ինվազիվ առիթմաբանի, ինվազիվ սրտաբանի եւ սրտաբանի կոնսուլտացիաներ, գործիքային հետազոտություններ ԷՍԳ, Էխո ՍԳ, հոլտեր մոնիթորինգ եւ արյան անալիզներ: Ընդ որում՝ բժիշկների այդ խումբն իր հետ մայրաքաղաքից բերում է նաեւ բժշկական որոշ սարքավորումներ: Այս անգամ նույնիսկ բերել էին շտապ օգնության մեքենա՝ ծանր հիվանդ լինելու դեպքում նրան Երեւան տեղափոխելու համար:

Կարեն Յամբարձումյանի սյունիքյան նախաձեռնությունն իրականացվում է «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական սիրտ-անոթային բժշկական կենտրոնի միջոցներով ու մասնագետներով:

Դրվատելի այդ նախաձեռնության իրականացմանն աջակցում են նաեւ «Բեսթ-լայֆ» գործընկերները, մասնավորապես գերմանական «Բիոտրոնիկ», ամերիկյան «Մեդլայն» եւ ճապոնական «Ասայի» ընկերությունները:

Ի դեպ, այդ ընկերությունների եւ «Բեսթ-լայֆ» միջեւ պարբերաբար կատարվում են փորձի փոխանակումներ, նրանց օգնությամբ իրականացվում են կադրերի վերապատրաստումներ:

Այդ համագործակցության շրջանակում էլ Կարեն Յամբարձումյանը 2019 թվականին վերապատրաստվել է գերմանական «Բիոտրոնիկ» ընկերությունում՝ ստանալով լուծվող ստենտներ տեղադրելու իրավունք:

Այդ ամենի շնորհիվ է նաեւ, որ «Բեսթ-լայֆ» դարձել է մայրաքաղաքի լավագույն կլինիկաներից մեկը եւ հաճախորդների քանակով, եւ կատարվող վիրահատությունների թվով ու որակով:

Վերջին մեկ տարում կենտրոնում ներդրվել են նոր ծառայություններ՝ ինվազիվ օնկոլոգիա, պերիֆերիկ անոթների ստենտավորում, պլանավորված է ներդնել ինվազիվ ներվոլիրաբուժություն:

Եվ, այդուհանդերձ, կուզենայինք Կարեն Յամբարձումյանի հետ մեր երկխոսությունից մեկ-երկու դրվագ ներկայացնել ամբողջական:

– **Պարոն Յամբարձումյան, 2013-19 թթ. աշխատել եք ԳործուՄ**



հայ-ֆրանսիական սիրտ-անոթային բժշկական կենտրոնի բուժական մասի ղեկավար:

2019-ի հունիսի 10-ից Երեւանում եք:

Հետաքրքիր է, կապ ունեք նախկին գործընկերների հետ:

– Ուղիղ կապ չկա, սակայն... Խոսակցություններ են լսում, որ հիվանդանոցը ձգնաժամի մեջ է, իբր հաճախորդների թիվը կտրուկ անկում է ապրել, իբր շատ դժգոհություններ կան:

Ցավով եմ ընդունում այդ խոսակցությունները, քանի որ հայ-ֆրանսիական սիրտ-անոթային բժշկական կենտրոնի կայացման գործում իմ համեստ ներդրումն ունեն:

Բայց ամենացավալին այն խոսակցություններն են, թե իբր ամեն ինչ անում են, որ ԳործուՄի հայ-ֆրանսիական բժշկական կենտրոնը փակվի. դա բանարկությունն է ստակ, դա մեծ սուտ է եւ անբարոյականություն:

– **Իսկ Դուք կվերադառնա՞ք ԳործուՄի հայ-ֆրանսիական սիրտ-անոթային բժշկական կենտրոն, եթե նման առաջարկություն արվի Ձեզ:**

– Հետաքրքիր եւ անսպասելի հարց տվեցիք... Անգամ այն ամենից հետո, ինչ քիչ առաջ ասացի, իմ պատասխանը միանշանակ «ոչ» չի լինի, մտածելու բան կունենամ, քանի որ Սյունիքի մարզը եւ հիվանդանոցի բուժանձնակազմի մեծ մասը շատ հարազատ են ինձ համար: Ի վերջո այդ մարդկանց հետ բազում կյանքեր ենք փրկել...»

– **Դուք պարբերաբար միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների եք մասնակցում՝ սրտաբանության խնդիրներին առնչվող:**

Ըստ Ձեզ՝ **ինչ վիճակում է սրտաբանությունը Հայաստանի Հանրապետությունում՝ աշխարհի՝ այդ ոլորտում առաջավոր համարվող երկրների համեմատությամբ:**

– Սրտաբանությունը, խոստովանենք, Հայաստանում բարձր մակարդակի վրա է:

Եվ եթե ինչ-որ հարցում զիջում է արտերկրի որեւէ կենտրոնի, ապա դա բացառապես պայմանավորված է մարդկանց սոցիալական վիճակով:

Բուժման մեթոդները կան, բարձրակարգ մասնագետներ՝ նույնպես: Բայց Հայաստանում այդ ամենը չեն անում ոչ թե նրա համար, որ ի վիճակի չեն, այլ նրա համար, որ նման ծառայությունները թանկ են, ինչը մեծամասամբ հասանելի չէ մեր հանրապետության բնակիչներին:

– **Մեք տեսնում ենք Ձեր եւ հիվանդների միջեւ ստեղծված սերտ կապը, տեսնում ենք այն հավատը, որ կա Ձեր հանդեպ:**

Ո՞րն է նման փոխըմբռնման գաղտնիքը:

– Երբեք հիվանդն իմ ձեռքում միջոց չի եղել կարիերա անելու, ինչու չէ՞ նաեւ գումար աշխատելու համար:

Յուրաքանչյուր հիվանդի վերաբերվել եմ այնպես, ինչպես կվերաբերվեի իմ հարազատին, որի հետ միասին պետք է հաղթահարենք առողջական խնդիրները:

Եղել են դեպքեր, որ այս կամ այն հիվանդի համար եկեղեցի եմ գնացել ու նրա փրկության համար աղոթք բարձաբերել առ Աստված:

Եվ ինձ անչափ բավարարված եմ զգում, որ որեւէ կյանք եմ փրկում, որ որեւէ մեկին կարողանում եմ վերադարձնել ազատի ու բնականոն կյանքի հուն:

Մի կարեւոր հանգամանք ես՝ օրվա բոլոր ժամերին հասանելի եմ ամեն մի հիվանդի...»

◆◆◆

Ընթերցողին հիշեցնենք՝ Կարեն Յամբարձումյանը Երեւանի «Բեսթ-լայֆ» հայ-ճապոնական բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկն է:

Ինչպես նշել ենք մեկ այլ առիթով, ԳործուՄի հայ-ֆրանսիական սիրտ-անոթային բժշկական կենտրոնում այդ տարիներին իրականացվել է երկու հազարից ավելի սրտի անոթների անգիոպլաստիկա, հինգ հազարից ավելի հիվանդի կոնսուլտացիա, ինչպես եւ կատարվել են էխոսրտագրություն ու սպասվող սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելում:

Եվ այդ ամենի շնորհիվ յուրօրինակ մերձավորություն եւ վստահություն է ձեւավորվել բժշկի ու տեղի բնակչության միջեւ:

Բազմաթիվ մարդիկ հեռակապի միջոցով են խորհրդատվություն ստանում նրանից, մյուսներն անձամբ են այցելում Երեւան, հաճախ էլ ինքն է անհանգստանում ու հետաքրքրվում հիվանդների առողջությամբ:

Որեմն եւ պատահական չէ, որ Կարեն Յամբարձումյան սրտաբանը, իր զբաղվածությամբ հանդերձ, ժամանակ է հնարավորություններ գտնում մասնագետների խմբով այցելելու ԳործուՄ ու կազմակերպելու հիվանդների ընդունելություն:

Առաջին անգամ նման այցելություն էր կազմակերպել 2019 թ. հոկտեմբերի 5-ին:

Փետրվարի 1-ի այցը երկրորդն էր:

Ի դեպ, 2019 թ. դեկտեմբերի 24-ին արժանացել է «**Որակի նշան. լավագույն ինվազիվ սրտաբան**» մրցանակի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում ունեցած մեծ ավանդի համար:

... Դե ինչ, սրտաբան Կարեն Յամբարձումյանին հաջողություն ենք մաղթում՝ հանրապետության մարզերի բնակչության բուժական սպասարկման անհրաժեշտ գործում:

Նաեւ ակնկալում ենք, որ Սյունիքի մարզի հետ նրա համագործակցությունը նորանոր դրսեւորումներ կունենա...

Սամվել Ալեքսանյան

Հարուստները նույնպես լացում են. Վահե Ա. Յ.-ն հերթական ջարդն է կերել Վերաքննիչում

Է ոսքը թիվ ԵԴ/16392/02/18 քաղաքացիական գործով դատավարության մասին է:

Հայցվորը Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանն է:

Պատասխանողը «Սյունյաց երկրի» խմբագիր Սամվել Ալեքսանյանն է:

Վեժի առարկան վերջինիս ասույթն է Երեանում՝ «Նոյան տապան» լրատվական կենտրոնում, որ տեղի է ունեցել 2018 թ. հունիսի 14-ին:

Հայցապահանջով Վահեն Սամվել Ալեքսանյանից փող է ուզում՝ 3 մլն դրամ:

Ուզում է, որ խմբագիրը ներողություն խնդրի իր հասցեին իբր հնչեցրած վիրավորական արտահայտությունների համար:

Ուզում է, որ խմբագիրը հերքի իբր զրպարտություն պարունակող տեղեկությունները՝ ասույթում հնչած:

Վահեն այդ նպատակով փաստաբանական խումբ էր ձևավորել՝ երկու հոգուց բաղկացած, որոնց բոլորապես ցցուն կոնտրաստը, որոնց համակած իրավական գիտելիքների երաշտն ու տարօրինակ պահվածքը հաշվի առնելով՝ անվանել ենք «Շոր եւ Շորշոր» փաստաբանական թիմ՝ հայտնի ֆիլմի հերոսներին հանգույն:

Գործը քննվում էր Երեան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, նախագահող դատավորն էր ինչ-որ Գ. Վարդանյան, ով առաջին իսկ դատական նիստում մոռացավ, որ ինքը նախագահող դատավորն է, եւ ստանձնեց Վահեի երդվյալ փաստաբանի դերը:

Ի դեպ, բացառիկ ազնիվ տղա է նախագահող դատավոր Գ. Վարդանյանը. պատասխանողիս բոլոր դիտարկումներին կամ միջնորդություններին արձագանքելուց առաջ խլչկոտում էր դեպի հայցվորի կողմը: Եվ քանի դեռ փաստաբանները գլխի շարժումով կամ միմիկայով վերաբերմունք չէին արտահայտում, ինքը բերանը չէր բացում:

Իսկ պատասխանող Սամվել Ալեքսանյանը, ինչպես հայտարարել էինք նախապես, իր իրավունքներն իրացնում էր մեն-մենակ՝ առանց փաստաբանի:

Եվ այդ դատավորը 2019 թ. սեպտեմբերի 6-ին հրապարակեց վճիռ:

Որոշվեց՝ Սամվել Ալեքսանյանից հոգուտ Վահե Հակոբյանի բռնազանձել 300 հազար դրամ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցման գումար:

Միաժամանակ՝ Սամվել Ալեքսանյանը պետք է հերքեր ասույթում իր իսկ հնչեցրած հինգ արտահայտություն, որոնք դատարանը գնահատել էր իբրեւ զրպարտող (վիրավորանք արտահայտող եւ իբր զրպարտող մյուս արտահայտությունների մասով մերժվել էին հայցվորի պահանջները):

Դեռ չէինք ստացել դատարանի վճիռը, երբ Զաչարանի կերակրատաշտից օգտվողների ուրթում հրավառություն սկսվեց:

«Սյունյաց երկրի» 2019 թ. դեկտեմբերի 12-ի համարում պատմել ենք այդ մասին, հրապարակումն այսպես էր կոչվում՝ «Շոր եւ Շորշոր» փաստաբանական թիմը մի փոքր շտապել էր՝ հայտարարելով «Սյունյաց երկրի» դեմ դատարանում տարած «հաղթանակի» մասին»:



» 33 վարչապետի կապանյան ասույթում (25 հունվարի 2020 թ.), երբ Սամվել Ալեքսանյանը հարց էր ուղղում Նիկոլ Փաշինյանին, դա հիվանդի աջ թեփից մի ծղրտոց լավեց: Ինչ-որ կին ասաց, թե ռեպորտաժ է պատրաստել Սամվել Ալեքսանյանի կողմից թույլ տրված եւ դատարանում հաստատված զրպարտության մասին:

Աշոտյան (կրթության երբեմնի նախարար), Շուշան Պետրոսյան (շատերիս սիրելի երգչուհի), ինչ-որ կին, ով ամուսնու սպանվելուց հետո տարիներ շարունակ այդպես էլ չի կարողանում զսպել իր խանդավառությունը...

Ազգային ռադիոն անպայման կթողարկի-կիրապարակի իբրեւ իր աշխատակից ներկայացող տիկնոջ խոստացած ռեպորտաժը Սամվել Ալեքսանյանի եւ «Սյունյաց երկրի» մասին (եթե, իհարկե, այդ կինն Ազգային ռադիոյի աշխատակից է), այլապես ստիպված կլինենք խոսք ասել...

Ինչ տեղի ունեցավ (իրավական առումով) այն բանից հետո, երբ 2019 թ. սեպտեմբերի 6-ին Երեան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կայացրեց վերոնշյալ վճիռը թիվ ԵԴ/16392/02/18 քաղաքացիական գործով:

Ներկայացրինք վերաքննիչ բողոք, որն էլ 2019 թ. նոյեմբերի 8-ին ընդունվեց վարույթ:

Շորը եւ Շորշորը միջնորդեցին՝ Վերաքննիչում գործը քննել զրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ գումարելու, առանց պատասխանող Սամվել Ալեքսանյանին լսելու:

Ալեքսանյանին հայիոյելու, զրպարտելու աննախադեպ սեանս ցուցադրեցին:

Նաեւ հայտարարեցին, թե Սամվել Ալեքսանյանից բռնազանձվող 300 հազար դրամը տրամադրելու են հայաստանյան մանկատներից մեկին:

Առաջ անցնելով հիշեցնենք՝ ի պատասխան այդ «բարեգործական» մտադրության, Սամվել Ալեքսանյանը մեկ այլ գործով դատական նիստում նույն փաստաբաններին տեղեկացրեց, թե պատրաստ է 300 հազար դրամ տրամադրել (եթե նույնիսկ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ չմտնի), միայն թե կարողանանք ամերիկյան հոսպիտալում բուժել այնտեղ գտնվող հայտնի բույսին:

Նր, եւ մի տղեկ, ով ժամանակներ առաջ իրեն «դավիթեկյան ուխտի» երդվյալ հետետոր էր համարում...

Կենացային մակարդակով իրականացվող այդ շողի եւ հրավառության նպատակը ակնհայտ էր՝ մարզի բնակչությանը հավատացնել, որ Վահեն դեռեւս կա, որ իրենք դեռ չեն մեռել, որ իրենք կարող են դատարանում պարտության մատնել «Սյունյաց երկրին», թերթի խմբագրին եւ նրանցից փող բռնազանձել, որ իրենք դեմ խոսողներին կարող են խեղդել...

Յեռուստաբեմադրության նախօրեին, ինչպես ասել ենք, մի կին էր զանգահարել՝ ներկայանալով մեզ անհայտ ինչ-որ անվամբ եւ խնդրել մեր վերաբերմունքը դատարանի դեռեւս չստացված վճիռի հանդեպ:

Մենք չճանաչեցինք այդ տիկնոջը, բայց զգացինք, որ գործ ունենք ցնորված մեկի հետ, քանի որ դիրքորոշում էր պահանջում դատական մի ակտի վերաբերյալ, որ դեռեւս չէինք ստացել:

Իսկ դրն էր մեր արձագանքն այդ ամենին:

Մենք ասացինք՝ համաձայն չենք Երեան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի տվյալ վճիռին:

Եվ գնում ենք Վերաքննիչ:

Ու եթե առաջին ատյանի դատարանի վճիռը մտնի օրինական ուժի մեջ, ապա դրանից բխող քայլեր կձեռնարկվեն:

Մենք չճանաչեցինք այդ տիկնոջը, բայց զգացինք, որ գործ ունենք ցնորված մեկի հետ, քանի որ դիրքորոշում էր պահանջում դատական մի ակտի վերաբերյալ, որ դեռեւս չէինք ստացել:

Խղճմտանք առաջացնող այդ զառամին պատասխանեցինք՝ երկու օրից մեր ասելիքը կհնչեցնենք:

Երկու օրում չհասցրինք ընդհանրացնել ասելիքը (զբաղվածության պատճառով):

Միջնորդը կողմին է խորհուրդ տվեցինք՝ ձեռնպահ մնալ փուչիկներից, հարայ-հրոցից, քանի դեռ վճիռն օրինական ուժի մեջ չի մտել:

Խորհուրդ տվեցինք նաեւ՝ գետին չհասած ոտները կամ շորերը չհանել:

Մինչդեռ մեր հորդորը տեղ չհասավ...

Մինչդեռ՝ երկու-երեք օր հետո սփռվեց հայտնի հեռուստաշուն:

Եվ մեռելահոտ գումարներով այդ հեռուստաբեմադրությունը գովազդի հանվեց համացանցում:

Դրան զուգահեռ՝ ինչ-որ էլիզաբեթ (ասում են Վահեի կինն է) ֆեյսբուքյան իր էջում զրառում կատարեց Սամվել Ալեքսանյանի եւ «Սյունյաց երկրի» դեմ տարած «փառապանծ» հաղթանակի մասին:

Հաջորդեց հիացական քննադատությունների «տարափը». Արմեն

33 վարչապետի կապանյան ասույթում (25 հունվարի 2020 թ.), երբ Սամվել Ալեքսանյանը հարց էր ուղղում Նիկոլ Փաշինյանին, դա հիվանդի աջ թեփից մի ծղրտոց լավեց: Ինչ-որ կին ասաց, թե ռեպորտաժ է պատրաստել Սամվել Ալեքսանյանի կողմից թույլ տրված եւ դատարանում հաստատված զրպարտության մասին:

Փորձեցինք արձագանքել ռեպլիկին, որի հեղինակ քաջարանցի տիկինը ներկայացել էր իբրեւ Ազգային ռադիոյի ներկայացուցիչ, բայց անսացինք վարչապետի հորդորին, ով կոչ արեց չվիճարանել...

Ինչեւէ, սպասում ենք, որ

Այդ միջնորդությունը մերժվեց:

Եվ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում 2020 թ. հունվարի 23-ին տեղի ունեցավ դատական նիստ:

Վերաքննիչ դատարանում մեր հայտարարությամբ վերահաստատեցինք այն ամենը, ինչ հնչեցրել էինք 2018 թ. հունիսի 14-ի ասույթում:

Եվ ինչ որոշեց Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը:

Որոշեց պատասխանող Սամվել Ալեքսանյանի վերաքննիչ բողոքը բավարարել:

Երեան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 06.09.2019 թ. թիվ ԵԴ/16392/02/18 գործով վճիռը՝ հայցը մասնակի բավարարելու մասով, բեկանել եւ փոփոխել, այն է՝ Վահե Հակոբյանի հայցն ամբողջությամբ մերժել:

Որոշումը հրապարակվեց 2020 թ. փետրվարի 11-ին:

Բարձր դատարանի այդ որոշմամբ՝ երբեմնի «ամենագոր» Վահե Հակոբյանի՝ վերջին երկու տարում կրած դատական անթիվ պարտությունների շարքը լրացվեց եւ մեկ ջախջախիչ պարտությամբ:

Վահե Հակոբյանը, անտարակույս, Վերաքննիչի սույն որոշումը կարող է մեկ ամսվա ընթացքում բողոքարկել Վճռաբեկ դատարանում: Եվ ինքը, գրեթե համոզված ենք, կգնա այդ քայլին:

Անշուշտ, դա իր կամքի արտահայտությունը չի լինի, քանի որ ինքը, որքանով տեսնում ենք, առանձնապես բան չի հասկանում այդ ամենից:

Երան կհամոզեն իր փաստաբանները, քանզի այդ կերպ նրանք էլ իրենց տունը պահելու խնդիրն են լուծում...

Ինչեւէ, պատրաստ ենք վերցնելու հայցվոր կողմի մեկնած նոր ձեռնոցը, որն անվազն կարտահայտվի վճռաբեկ բողոքի տեսքով: Մինչեւ նոր հանդիպում...

Սամվել Ալեքսանյան

» Ինչեւէ, սպասում ենք, որ Ազգային ռադիոն անպայման կթողարկի-կիրապարակի իբրեւ իր աշխատակից ներկայացող տիկնոջ խոստացած ռեպորտաժը Սամվել Ալեքսանյանի եւ «Սյունյաց երկրի» մասին (եթե, իհարկե, այդ կինն Ազգային ռադիոյի աշխատակից է), այլապես ստիպված կլինենք խոսք ասել...

Կյորու

Օ երծերի մեջ պահված մի գյուղ է Կյորուն՝ սրածայր ժայռերով, քարանձավներով շրջապատված, գետնափոր տներով, ուր արեւի շողերի մի խորձ է թափանցում փոքրիկ երդիկից եւ հազիվ է լուսավորում քարայրի ներսը:

Ծնկներդ դողում են ու ցավում, մինչեւ նեղ կածանով Կյորու կիջնես:

- Ինչպես են ապրում, ինչո՞ւ այս խորխորատից դուրս չեն եկել,- պատրաստվում ես հարցնելու հանդիպածդ գյուղացուն:

- Իրենք էլ են բեզարել:

- Ոչ մի շինարար աշխատանք չենք ուզում կատարել, - ասում են գյուղացիք:

- Ղզբաշի ժամանակ Կյորուն «պենդոտ» (բերդ) է եղել: Մեր պապերը դրա համար են հավաքվել էստեղ,- ասում էր մի այնտեղ:

- Հիմա փուչ տեղ է, էստեղ ապրել չի լինի:

«Պենդոտի» ավերակները մինչեւ այժմ էլ կան: Ձորի երկու ափին, բարձր ժայռերի մեջ թաքստոցներ եւ անցքեր կան, որտեղից կրակել են ղզբաշի ժամանակ: Այդ ամբողջում գյուղացիք հիմա խոտ են դարսում:

Կյորուն աղքատ է, անչափ աղքատ:

Յոթանասուն ծովան ունի մի ձի եւ մի ջորի: Ամենից ունենոր գյուղացին ունի 20 ոչխար, 2 կով, մի կամ երկու լծկան եւ մի եզ: 25 տուն լծկան ու կթան չունեն:

Հավ էլ չունեն իսկի, նրանց շեմքում կատու էլ չի մկավում:

Աղքատներն ամառը հասկաքաղ են անում մի փոքր հացով, սրա նրա արտը քաղհանում, շալակով փայտ են բերում, ծախում կամ թե հարեան գյուղերում մշակ վարձվում: 20 տուն գաղթել է Բագու, եւ աշխատում են նավթահորերում: Այնտեղ նրանք ավելի լավ են ապրում, քան գյուղում եւ գյուղ վերադառնալու մտադրություն էլ չունեն:

Դպրոց չունեն: Եկող տարվա համար որոշել են մի սենյակ պատրաստել: Նստարանների վարձը Բագվի միությունն է խոստացել տալ:

- Վարձապետ չունենք, մեր գյուղը դժվար թե գան, - ասում են գյուղացիք:

Իրենց գյուղից մեկին ուղարկել են Բագու, որպեսզի կուրսերում ավարտի, ուսուցչության պատրաստվի: Հիմա էլ ցենզի խնդիր կա, խեղճը շվարել է, հույս չունի, թե կը կարողանա քննություն տալ:

- Աղքատ ենք, համա գիտակից, - մի առանձին հայարտությանմբ ասում է ընկեր Արամայիսը՝ բջիջի քարտուղարը:

Գյուղում կա 80 պիոներ, որոնք լավ կազմակերպված են, կանանց միությունը 45 անդամ ունի: Ձմեռվա ընթացքում կանոնավոր պարապել են:

- Նոր կենցաղն սկսել է տիրապետել, - ասում է ընկ. Արամայիսը եւ պատմում, թե ինչպես է մեռնում գյուղում չքավոր մի երիտասարդ: Քահանան պատրաստվում է թաղելու, իսկ իրենք մինչեւ լուսաբաց նստում են ու սովորում հեղափոխական երգեր, դրոշակ պատրաստում եւ առավոտյան մեծ շուքով թաղում:

Հողը պակաս է, տեղը՝ քարոտ: Հողային խնդիրը խճճված է:

Այս տարի ցանքերը երաշտից ու ձմռան ցրտերից վնասվել են. մուկն էլ մի կողմից է վնասել:

Հույս են դրել այգիների վրա, գուցե մի բան ստացվի: Այգիներում էլ հիվանդություններ են տարածվել, իսկ գյուղացիք՝ բժշկության ձեռքերին անձանոթ են:

- Էս Կյորուում ապրելով մի լայն օրի հասնելու չենք,- ասում է մի գյուղացի, որ եկել է մեզնից նոր լուր իմանալու:

Գյուղը ջուր էլ չունի:

Դարերի ընթացքում որբան աշխատել են ջրի փոքրիկ առվակները քերծից քերծ տանելու: Մի տեղ ժայռն են ծակել մի քանի սաժեն երկարությամբ, մի այլ տեղ՝ հսկա թմբերը շինել կամ նավերը անցկացրել, որոնք լարախաղի պարանի պես ձգվում են մի քերծի գլխից դեպի մյուսը: Եվ ինչպիսի վտանգավոր ծեռվ է մաքրում այդ նավերը կամ ժայռերը պայթեցնում նոր առու անցկացնելու: Պատահել է, որ նավի գլխից մար-



դիկ ձորի անդունդն են ընկել: Սարի գլխին մի տափարակ տեղ կա, գյուղի համար շատ հարմար, եւ ահա որոշել են ամբողջ գյուղով ձորից դուրս գալ եւ այդ տափարակում նոր գյուղ հիմնել, սակայն որոշումն անկատար է մնացել, միջոց չունեն:

- Էս հեռու ձորին ո՞վ է օգնում, - ասում են, - օգնություն որ լինի, մենք էստեղ չենք ապրի:

Վտանգավոր էլ է: Շատ անգամ ժայռերը փլվում են, մարդ ու անասուն տակովն անում: Քանի՞ գլխի անասուն է գործել նեղ կածանից դեպի անդունդը: Հենց հիմա էլ գյուղի վերեւում մի ահաբեկ ժայռ կա, որը ճաքել է եւ մոտ է փլելու: Եթե դինամիտ լինի, վտանգը կարելի է կանխել:

Մի քանի տարի շարունակ գյուղը դաշտում ջրի ակունք է փնտրել:

Դաշտում էլ ջուր չկա: Գութանավորին էշով են ջուր տանում:

Ջրորսների այդ բազմությունը շատ տեղեր է փորել՝ ջուր գտնելու հույսով: Եվ գյուղում որքան են ուրախացել, երբ մի գեղեցիկ օր հողի երեսի խոնավ շերտը վարելուց հետո կանոնավոր առու է գոյացել:

Փրկության ուղին գտել են, ելք են ստեղծել, բայց միջոց չունեն նոր գյուղ հիմնելու:

Ջրորսները հիմա էլ շարունակում են ջրի ակունք փնտրել լեռի ժայռերի մոտ ամռան կիզիչ արեւի տակ:

◆◆◆

Աղբյուրի մոտ հանգստանում ենք: Կին ու աղջիկ ջրի են գալիս: Մեզ տեսնելիս մի քիչ շփոթվում են, ոմանք երեսը կիսով չափ ծածկում: Լսում են՝ ինչպես միմյանց հարցնում են, թե ովքեր են սրանք:

- Ամոթ չիմի հարցնել, որտեղացի եք, - դառնում է մեզ մի տարիքավոր կին, կուժը աղբրի տակ դնելով:

Ես պատասխանում եմ, ու մի քիչ անց՝ էլի հարցնում է, այս անգամ, թե ինչո՞ւ ենք եկել:

- Լանի, եկել ենք բաղերին ճար խփենք, - ասում է մի կոմսոմոլ:

Լանին չի հավատում, թե այգիները դեղ սրսկելով կարելի է բուժել:

Լայում է մեզ, մեր գործիքներին ու ծոր տալով ասում.

- Է, դրանով բան չի լինի: Ցավը տվովի է, ինչ կարող եք անել:

«Տվովի» ասելիս, գլուխը դեպի երկինք է բարձրացնում, ինչպես հավը ջուր խմելիս: Լանին գնաց ու քիչ հետո մի փոքրիկ

տղայի թեւից բռնած հետ եկավ:

- Կարանք սրան մի ճար արեք, մինուժարս է, - ասեց ու փոքրիկի շապիկը վեր քաշեց: Երեխայի պորտի տակ մի մեծ ուռուցք կար, որից նա շատ էր նեղվում:

Ասում եմ, որ բժիշկի մոտ տանի:

- Բա դուք մի ճար չունե՞ք,- նորից է հարցնում ու զղջալով հետ դառնում:

Աղբյուրին է մոտենում մի պատանի՝ ծաղկատար դեմքով, ծաղկից կուրացած աչքերով: Փայտով գետինը շոշափելով՝ նա հասնում է աղբյուրին, մի կուշտ խմում ու էլի հեռանում:

- Կույր է, գիշերն էլ մենակ հանդ է գնում, եզները պահում:

Տան միակ աշխատավորն է, - ասում է գզիրը, որ երկու ժամ գյուղում ման գալուց հետո, հազիվ կարողացել է մի լրար էլ գտնել, դեղորայքն ու գործիքներն այգիները տանելու համար:

Ճանապարհ ենք ընկնում: Այգիները չորս վերստ հեռու են: Պետք է բարձրանալ սարն ի վեր, իջնել, նորից վեր ելնել ու այսպես մի քանի անգամ:

Որոտում է, անձրեւ է գալու, շտապում ենք: Գզիրը բզում է Էշին եւ մերթ ընդ մերթ հետեւից հրում:

- Մի տուն է պահում, է, ութ շուն էս քուռակին են նայում, - ասում է եւ սրածայր մահակով կրկին բզում:

Անձրեւը կաթկաթում է եւ հանկարծ փոխվում կարկոտ:

Տասը ռուպե չանցած՝ գետինն սպիտակ է տալիս: Կարկոտի հաջորդում է անձրեւը, վարար անձրեւ, ասես դույլերով են ջուր թափում:

Գզիրը ավելի է բզում, նզովում, «վաշ» անում, որ կարկոտն արտերին վնասեց, որ հեղեղ է լինելու եւ նորից ու նորից հրում, բզում իշին:

Այգիները դեռ հեռու են, որոշում ենք վերադառնալ: Մեր եկած ճանապարհն անձանաչելի էր դառել: Ամեն քարի վրա մանր վտակներ, պղտոր անձրեւաջուր, ու սրընթաց գետակներ, որ շառաչով, ահագին քարեր տանելով թավալվոր իջնում էին սարի լանջով:

Յեխ է, սայթաքում ենք: Շորերս սպունգի պես անձրեւ է ծծել:

Արագացնում ենք մեր քայլերը:

Վարյեջքն ավելի հեշտ է: Աղբյուրի մոտ, ձորի միջով մի ահագին գետ է անցնում:

Մի կերպ քարերի վրայով ցատկում ենք, վազում ու մտնում առաջին պատահած

գոմը:

Գզիրը տնից-տուն է ընկնում - փոխնորդ շորեր կար, չտվին, - ասում է գզիրը: - Բագվից են բերել, ազիզ են պահում:

Անձրեւը չի դադարում:

Հավաքվում ենք «Կանցելարը», որ ներքնահարկ մի սենյակ է:

Հեղեղը փոքրիկ լճակներ է գոյացրել «կանցելարի» հողի հատակի վրա:

Գզիրը ցախ է բերում, հենց «կանցելարում» էլ կրակ անում: Տաքանում ենք: Գյուղացիք մեկ-մեկ հավաքվում են:

Բոլորն էլ փոքրիկ, թրջված, ոմանք մի հնամաշ կարպետ ուներին: Խռնված են կրակի շուրջը:

Խոսքը հեղեղի մասին է: Մի տեղ հեղեղը արտն է սրբել, տարել, մի ուրիշ տեղ այգում կարասներն են ջարդվել, ոչխար է ընկել հեղեղի բերանը, ջաղացի առուն է քանդվել:

- Դրանց էլը ջրի մեջ տաշեղի նման վեր ու վար էր անում, - հայտնում է մեկը:

Մի քանի օր առաջ արտերը երաշտից խանձվում էին, հիմա էլ հեղեղն է վնասել:

- Էդ լավ եղավ, որ թրջվեցինք, - ասում է մեզ մի այնտեղ, - գյուղացու հայն իմացեք:

Խորհրդի նախագահը գանգատվում է, որ մկների դեմ պայքարն ուղացնում են: Ինքն այդ մասին վաղուց է հայտնել Շրջգործկոմին:

Հետո պարզվեց, որ մկների մասին ուղարկած դիմումը շրջգործկոմի գրասենյակից հողբաժին է հասել... տասը օրվա ընթացքում, այնինչ երկուսի միջեւ միայն մի արշինանոց պատ կա, դռներն էլ իրար կից են:

«Կանցելարում» կրակը թեժացնում ենք: Բագվից նոր եկած մի բանվոր, որ հանդում թրջվել ու ցեխոտվել է, մոտենում է կրակին:

- Էհ, տասը տարի քաղաքում չարչարվես, մի քանի օր գյուղում չապրես: Էս ինչ հալ է...

Սկսում է Բագուն գովել:

- Ուր ժամ աշխատի, եկ տանը քնիր, ինչ քան ուզես:

Կույս ենք եկել կրակի շուրջը: Բոցը կարմիր լեզվակներով դիպչում է ցախերին ու լուսավորում ներքնահարկ «կանցելարը»: Անձրեւը չի դադարում:

Դուրսը մութ է արդեն: Քամուց խշշում են դարավոր ընկուզենիները, իսկ ձորերում հեղեղն է վշշում՝ ահագին քարեր իր երախի մեջ առած: Մթի հետ զարգանդ է իջնում գյուղի վրա:

Մոթով փափախի տակ, չիբուխին գոռ տալով, մի միտք են անում գյուղացիք:

- Ինչքան վնաս տվեց հեղեղն այսօր...

ԱՎՍԵԼ
«Խորհրդային Հայաստան»,
26 օգոստոսի 1925թ., N 193

Փետրվարի 25-ը Հորավար Անդրանիկի ծննդյան օրն է

Մեծ զորավար, պեպական գործիչ, հայդուկապետ Անդրանիկ Օզանյանը, ում ժողովուրդն Անդրանիկ փաշա էր անվանում, դարձավ 155 տարեկան:



հայկական Գարիբալդի: Հորավարը հայտնի է հայ գաղթականության հանդեպ դրսևորած իր անսահման հոգածությամբ:

«Հորքի համար նա հրամանատար էր, գաղթականության համար՝

հայր», - գրել է նրա զանգեզուրից գինակիցներից մեկը:

Անդրանիկի ռազմական տաղանդը բացահայտվեց, նախեառաջ, Առաքելոց վանքի և Սասունի հերոսական պաշտպանության օրերին: Անդրանիկյան հերոսապատույնը հասել է մինչև Սյունիք:

Սյունիքի հետ Անդրանիկի առնչությունները հիմնականում վերաբերում են 1918-1919 թթ.: Հորավար Անդրանիկը Սյունիք ժամանեց 1918 թ. հուլիսին և և հեռացավ 1919 թ. մարտի 25-ին:

Հորավարը բազում խորհուրդներ ու դասեր է թողել եկող սերունդներին: Ահա նրանցից մեկը: «Եթե իրիկունք գլխներդ բարձին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ազգի մասին: Այնուհետև մտածեցեք ձեր հարեանի մասին, հայ լինի նա, թե թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզի լինի, և բարի մտածեք»:

Ստեփան Շահումյանն Անդրանիկին անվանել է իսկական ժողովրդական հերոս, ով արժանացել է իր ժողովրդի անսահման սիրուն ու պաշտպանությանը: Դեռեռա կենդանության օրոք Անդրանիկի անունը դարձել էր լեզբերի, նրա մասին երգեր են հյուսվել, բազմաթիվ գրքեր գրվել: Անդրանիկին անվանում էին

Ժողովրդական արտիստ, սիրված դերասան Երվանդ Մանարյանը...



զատ եմ, արվեստագետը պետք է ընդդիմադիր լինի», մի առիթով ասել է Մանարյանը: Երբ փոթորկվում էին Երեանի փողոցները, նա միշտ օրվա իշխանությունների դեմ ծառայած մարդկանց մեջ էր, Մատենադարանի առջևի հարթակին: Նաև մտահոգություն է հայտնել. «Այսօր արվեստը, թատրոնը՝ մասնավորապես, դժբախտաբար զբաղված են հիմնականում միայն զվարճացնելով: Ծիծաղն ու քրքիջը չի միայն, լաց լինելն էլ զվարճանալու տեսակ է: Այսօր մեր արվեստն ավելի շատ ժամանցային է: Մեզ չի խոցում: Բայց այն պետք է ցավ պատճառի: Մենք էլ պիտի ընդվզենք էդ ցավի դեմ, որ պեսզի իմանանք, որ նա կա»:

Երվանդ Մանարյանը երկու անգամ ղեկավարել է Գորիսի դրամատիկական թատրոնը: 1985-ին, երբ վերաբացվեց Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնը, առաջինը բեմադրվեց Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման՝ ռեժիսոր Երվանդ Մանարյանի ղեկավարությամբ, ինչն անչափ ջերմությամբ ընդունվեց հանդիսականի կողմից:

Գորիսի թատրոնի վերածնունդն իրավամբ կապված է նրա անվան հետ: Տասը տարի հետո էլ Ե. Մանարյանը

Կյանքի 96-րդ տարում վախճանվեց սիրված դերասան, ռեժիսոր, սցենարիստ, մանկավարժ, հրապարակախոս, Երեան քաղաքի պատվավոր քաղաքացի Երվանդ Մանարյանը, ով հայկական կինոյում և թատրոնում առանձնացավ իր բարձր հոգեկերպվածքով, արվեստագետի համարձակ դիրքորոշմամբ:

նկարահանել վավերագրական եւ գեղարվեստական ֆիլմեր, կերտել անմոռանալի կերպարներ՝ Երվանդը՝ «Հարսնացուն հյուսիսից», մի այլ Երվանդ «Խոհարարները եկել են մրցույթի» կինոնկարներում, Սարսափունին՝ «Ընկեր Փանջունի», Բեռնարը՝ «Մորգանի խնամին» ֆիլմերում, գրել է «Տժվժիկ», «Տերն ու ծառան», «Սպիտակ ափեր» ֆիլմերը:



Դրվագ գորիսյան օրերից

րի սցենարները: Մամուլում հրապարակել է պատմվածքներ եւ հոդվածներ: «Հարսնացուն հյուսիսից» ֆիլմում նրա արտահայտած որոշ մտքեր դարձել են թեավոր խոսքեր: Նա ընդդիմադիր էր, պայքարող ու անզիջում: «Իմ կրճանը հարա-

րյանը Գորիսի թատրոնում բեմադրել է իր «Իրարանցում հոգեբուժաբանում» պիեսը:

Հայ բեմարվեստի եւ կինոարվեստի երեւիլներից մեկը եւ բռնեց հավերժի ճամփան...

Վահրամ Օրբելյան

Վերիշենում մեկնարկվեց «Համայնքի տնտեսական զարգացում՝ բրդի մշակման արժեշտային ընդլայնմամբ» նախաձեռնությունը



2020թ փետրվար ամսից Սյունիքի մարզի Վերիշեն բնակավայրում մեկնարկվեց «Համայնքի տնտեսական զարգացում՝ բրդի մշակման արժեշտային ընդլայնմամբ» նախաձեռնությունը, որը ֆինանսավորվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ «Պահպանվող տարածքների աջակցության ծրագիր»- Ջայասուրան ծրագրի կողմից:

«Գորիսի Ջարգացման Կենտրոն» ՀԿ-ն՝ Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ մշակել են Սյունիքի մարզի Վերիշեն բնակավայրում բրդյա տեքստիլի եւ գորգարվեստի զարգացման նախաձեռնություն, որը կնպաստի բնակավայրում աշխատատեղերի ստեղծմանը եւ բրդի արժեշտային զարգացմանը՝ խթանելով բնակչության զբաղվածությունը եւ համայնքի տնտեսական մրցունակության բարձրացումը մարզում:

Ծրագրի նպատակն է նպաստել Վերիշեն պահպանվող տարածքի տնտեսական զարգացմանը՝ բրդի արժեշտային զարգացման միջոցով: Վերիշեն բնակավայրում կազ-

մակերպություններն իրենց գործընկերների հետ համատեղ ջանքերով կիրմնադրեն ձեռագործ տեքստիլ արտադրություն՝ ապահովելով եկամուտ վաստակելու հնարավորություններ բնակավայրի սոցիալապես անապահով ընտանիքների համար: Արտադրամասն ունենալու է ջրփակագործական եւ գորգագործական բաժիններ, որտեղ տեղացի կանայք կհմտանան այս արհեստների մեջ եւ աշխատանքի կանցնեն արտադրամասում: Այն հնարավորություն կտա նաև տասնյակ ուսանողների, երիտասարդների եւ աշակերտների՝ իրենց արտադրական պրակտիկան անցկացնելու եւ հմտանալու նոր արհեստների ուսուցման մեջ:

Ծրագրին իր մեծ աջակցություն է ցուցաբերում Գորիսի համայնքապետարանը, որն անհատույց օգտագործման բարեկարգ տարածք է տրամադրել կազմակերպություններին՝ արտադրությունը կազմակերպելու համար:

Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր- Ջայասուրան
Goris Women's Development Resource Center Foundation



Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԿԻԶ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆՈՒԹՎ ԳՈՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԷՐ ԱՆԵՂԱՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47է
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 26.02.2020թ.: